Կազմված է «07» ապրիլի 2023 թ.

Բաղկացած է 17 (տասնյոթ) էջից

Տպագրված է ընդամենը 3 (երեք) օրինակ

Օրինակ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Տելեկոմ Արմենիա»

Բաց բաժնետիրական ընկերության

միակ հիմնադրի 2023 թ.ապրիլի 7-ի որոշմամբ

(արձանագրություն թիվ 230407)

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության
աշխատակազմի
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի գործակալության
կողմից

Գրանցման համար՝ 264.13.0.13 10965

ՀՎՀՀ՝ 02500052

Գլխավոր տնօրեն՝

Հայկ Հովիկի Եսայան

«07» ապրիլ 2023թ.

Աշխատակից՝

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2023

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն») իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին (այսուհետ՝ «Օրենսգիրք»), Բաժնետիրական ընկերությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքին (այսուհետ՝ «Օրենք»), Հայաստանի Հանրապետության այլ օրենքներին և իրավական ակտերին համապատասխան:

1.2. Ընկերությունն ունի մեկ բաժնետեր: Ընկերության 100% (հարյուր տոկոս) բաժնետոմսերը սեփականության իրավունքով պատկանում են «ԹԻՄ» ՓԲԸ-ին (գրանցված ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում 30.12.2021թ. ՀՀ օրենսդրության համաձայն, գրանցման համար՝ 264.120.1210976)

1.3. Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գործող ՀՀ օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

1.4. Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, իր ֆիրմային անվանումը (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով) կարող է ունենալ ֆիրմային անվամբ կնիք, դրոշմներ և ձևաթղթեր, խորհրդանիշ, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, սպասարկման և այլ նշաններ ու անհատականացնող այլ միջոցներ:

1.5. Ընկերության ֆիրմային անվանումն է՝
Հայերեն լրիվ՝ *«Տելեկոմ Արմենիա» Բաց Բաժնետիրական Ընկերություն*
Հայերեն կարճ՝ *«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ*
Ռուսերեն լրիվ՝ *«Телеком Армения» Открытое Акционерное Общество*
Ռուսերեն կարճ՝ *ОАО «Телеком Армения»*
Անգլերեն լրիվ՝ *«Telecom Armenia» Open Joint Stock Company*
Անգլերեն կարճ՝ *«Telecom Armenia» OJSC*

1.6. Ընկերությունը լիարժեք իրավահաջորդն է ստորև թվարկված իրավաբանական անձանց՝ հաջորդական հետևյալ անվանափոխությունների և վերակազմակերպումների արդյունքում՝

- «ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵՖՈՆ ԿՈՄՊԱՆԻ » համատեղ ձեռնարկություն ՓԲԸ, գրանցված՝01.03.1995.թ. , գրանցման համարը՝ 286.120.01091, ՀՎՀՀ՝ 02500052, (անվանափոխություն)
- «ԱՐՄԵՆԻԱ ՏԵԼԵՖՈՆ ԿՈՄՊԱՆԻ» փակ բաժնետիրական ընկերություն, գրանցված՝01.03.1995.թ., գրանցման համարը՝ 286.120.01091, ՀՎՀՀ՝ 02500052 (անվանափոխություն 09.11.2007թ.),
- «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն, գրանցված՝01.03.1995.թ., գրանցման համարը՝ 286.120.01091, ՀՎՀՀ՝ 02500052 (անվանափոխություն),«Տելեկոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն, գրանցված՝01.03.1995.թ., գրանցման համարը՝ 286.120.01091, ՀՎՀՀ՝ 02500052 (վերակազմակերպում):

1.7. Ընկերության գտնվելու վայրի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0014, ք.Երևան, Ազատության պողոտա 24/1 շենք:

1.8. «Տելեկոմ Արմենիա» ՓԲ ընկերության ներքին իրավական ակտերը շարունակում են պահպանել իրենց ուժը այնքանով, որքանով դրանք կիրառելի են «բաց բաժնետիրական» կազմակերպաիրավական ձև ունեցող ընկերությունների նկատմամբ:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1. Ընկերության հիմնական նպատակը տնտեսական գործունեություն իրականացնելու միջոցով շահույթ ստանալն է:

2.2. Ընկերության գործունեության հիմնական տեսակը հեռահաղորդակցության ծառայությունների մատուցումն է:

2.3. Ընկերությունը կարող է նաև իրականացնել օրենքով և այլ իրավական ակտերով չարգելված ցանկացած գործունեություն:

2.4. Ընկերությունը կարող է զբաղվել ՀՀ օրենսդրությամբ լիցենզիա պահանջող գործունեության տեսակներով՝ համապատասխան լիցենզիայի (թույլտվության) առկայության դեպքում: Լիցենզիա պահանջող գործունեություն իրականացնելու իրավունքը Ընկերության մոտ առաջանում է նման լիցենզիա ստանալու պահից կամ դրանում նշված ժամկետում, և դադարում է լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

2.5. Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Ընկերությունը լիցենզավորվող գործունեությունից բացի այլ գործունեությամբ զբաղվել չի կարող, կամ եթե սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Ընկերությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեությամբ, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ընկերության իրավական կարգավիճակը սահմանվում է Օրենսգրքով, Օրենքով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:

3.2. Ընկերությունը առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

3.3. Ընկերության իրավունակությունը ծագում է իր ստեղծման (պետական գրանցման) պահին և դադարում է լուծարման (պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու) պահից:

3.4. Ընկերությունը համարվում է ստեղծված և ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ՝ ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցվելու պահից:

3.5. Ընկերության գործունեության ժամկետը սահմանափակված չէ:

3.6. Ընկերությունը, որպես սեփականություն, ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում, և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

3.7. Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ:

3.8. Ընկերությունը սեփական պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իրեն որպես սեփականություն պատկանող ամբողջ գույքով:

3.9. Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:

3.10. Ընկերության բաժնետերերը Ընկերության պարտավորությունների համար պատասխանատվություն չեն կրում, այլ իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են միայն Ընկերության գործունեության արդյունքում առաջացող վնասների ռիսկը:

3.11. Եթե Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառը բաժնետերերի կամ Ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու կամ Ընկերության գործունեությունն այլ կերպ կանխորոշելու իրավունք ունեցող այլ անձանց գործողություններն(անգործություն) են, ապա Ընկերության պարտավորությունների համար նշված բաժնետերերի կամ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (սուբսիդիար) պատասխանատվություն

3.12. Վերոհիշյալ բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը) համարվում են Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ միայն այն դեպքում, եթե վերջիններս օգտագործել են իրենց նշված իրավունքները կամ հնարավորությունները Ընկերությանը որոշակի գործողություններ կատարելուն կամ չկատարելուն հարկադրելով՝

նախապես իմանալով, որ այդ պատճառով Ընկերությունը կհայտնվի անվճարունակության (սնանկության) վիճակում:

3.13. Հայաստանի Հանրապետությունը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունը պատասխանատվություն չի կրում ՀՀ, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պարտավորությունների համար:

3.14. Ընկերությունը կարող է լինել այլ ընկերության հիմնադիր(մասնակից), բացառությամբ Օրենսգրքով, Օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերի:

3.15. Ընկերությունը կարող է ունենալ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ ընկերություններ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ Օրենքին, ՀՀ այլ օրենքներին և սույն կանոնադրությանը համապատասխան հիմնադրված, իսկ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հիմնադրվածները՝ ըստ դուստր կամ կախյալ ընկերության գտնվելու վայրի օտարերկրյա պետության օրենսդրությանը համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

3.16. Ընկերությունն իրավունք ունի.

3.16.1. ՀՀ օրենսդրությամբ չարգելված բոլոր ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում՝ արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,

3.16.2. օտարել, վարձակալությամբ տրամադրել, փոխանակել և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավատու և կամ գրավառու,

3.16.3. իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ,

3.16.4. դատարանում հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող:

3.16.5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բացել հաշիվներ ՀՀ և օտարերկրյա պետությունների բանկերում՝ ինչպես ՀՀ արժույթով, այնպես էլ արտարժույթով:

3.16.6. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տեղաբաշխել արժեթղթեր,

3.16.7. Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պայմաններով անցկացնել իր թողարկած բաժնետոմսերի բաց բաժանորդագրություն և դրանց ազատ վաճառք: Ընկերությունը կարող է անցկացնել նաև իր թողարկած բաժնետոմսերի փակ բաժանորդագրություն,

3.16.8. ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի մի մասը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

3.16.9. բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով ավելացնել իր կանոնադրական կապիտալը,

3.16.10. ինքնուրույն կազմակերպել իր ֆինանսական ռեսուրսների ձևավորումը՝ ազգային արժույթով և/կամ արտարժույթով միջոցների ներգրավմամբ, ՀՀ-ում և այլ պետություններում բանկային և առևտրային վարկերի ստացմամբ,

3.16.11. ինքնուրույն վարել իր արտաքին տնտեսական գործունեությունը, այն իրականացնել անմիջականորեն՝ առանց միջնորդի կամ նմանատիպ այլ կազմակերպության հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելու,

3.16.12. ստեղծել հիմնարկներ, առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ) ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ դրա սահմաններից դուրս

3.16.13. բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի, ինքնուրույն պլանավորել իր գործունեությունը, որոշել թողարկվող արտադրանքի, կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների ծավալը, գները, իրենց արտադրանքի մատակարարներին և սպառողներին,

3.16.14. արտարժույթով միջոցներ ունենալ, օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով (այդ թվում արտաքին տնտեսական գործունեության արդյունքում) արտարժույթով միջոցներ ձեռք բերել, ինքնուրույն տնօրինել դրանք, այդ թվում՝ վաճառել պետությանը, այլ իրավաբանական անձանց, կազմակերպություններին կամ քաղաքացիներին:

3.16.15. ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ չարգելված միջոցներով իրականացնել այլ իրավունքներ:

3.17. **Ընկերությունը պարտավոր է.**

3.17.1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վարել հաշվապահական հաշվառում և պետական իրավասու մարմիններ ներկայացնել ֆինանսական և վիճակագրական հաշվետվություն,

3.17.2. իրականացնել Ընկերության փաստաթղթերի (ընկերության կանոնադրություն, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հավաստող փաստաթղթեր, ընկերության ներքին փաստաթղթեր, տարեկան հաշվետվություններ, հաշվապահական հաշվառման փաստաթղթեր, կառավարման մարմինների նիստերի արձանագրություններ, ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթեր) վարումը և պահպանումը,

3.17.3. հնարավորություն ընձեռել իր բաժնետերերին ծանոթանալ վերոնշյալ փաստաթղթերին (բացառությամբ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող փաստաթղթերի)

3.17.4. Օրենքով սահմանված կարգով հրապարակել ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պարտադիր հրապարակման ենթակա տեղեկատվությունը,

3.17.5. պետական գրանցումն իրականացնող մարմիններին ծանուցել մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծման մասին,

3.17.6. աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատողների հետ,

3.17.7. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում հայտարարել իր սնանկության մասին,

3.17.8. կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

4.1. Ընկերության Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող՝ Ընկերության գույքի նվազագույն չափը և կազմված է բաժնետերերի ձեռք բերած Ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքից (տեղաբաշխված բաժնետոմսեր):

4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 18.837.709.000 (տասնութ միլիարդ ութ հարյուր երեսունյոթ միլիոն յոթ հարյուր ինը հազար) ՀՀ դրամ և բաժանված է 188.377.090 (հարյուր ութսունութ միլիոն երեք հարյուր յոթանասունյոթ հազար իննսուն) հատ «Բ» դասի հասարակ (սովորական) բաժնետոմսերի՝ յուրաքանչյուրը 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով:

4.3. Ընկերությունն ունի նաև 500.000.000 (հինգ հարյուր միլիոն) հատ «Ա» դասի հասարակ (սովորական) հայտարարված բաժնետոմս: Հայտարարված մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 100 (հարյուր) ՀՀ դրամ է:

4.4. Ընկերության բոլոր «Բ» դասի հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված են և պատկանում են բաժնետերերին:

4.5. Ընկերության «Բ» դասի հասարակ մեկ բաժնետոմսով սեփականատիրոջը տրամադրվում է 10 (տասը) ձայնի իրավունք:

4.6. Ընկերության «Ա» դասի հասարակ մեկ բաժնետոմսով սեփականատիրոջը տրամադրվում է 1 (մեկ) ձայնի իրավունք:

4.7. Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կարող է փոփոխվել օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Կանոնադրական կապիտալի փոփոխություններն ուժի մեջ են մտնում կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու և այդ փոփոխությունները իրավաբանական անձանց պետական ռեգիստրում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով գրանցելու պահից:

4.8. Կանոնադրական կապիտալի չափը մեծացվում կամ փոքրացվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, որի գումարման մասին ծանուցումը պետք է բովանդակի՝

4.8.1. կանոնադրական կապիտալի մեծացման կամ փոքրացման շարժառիթները, եղանակը և չափը,

4.8.2. կանոնադրական կապիտալի չափի մեծացման կամ փոքրացման կապակցությամբ Ընկերության կանոնադրության մեջ կատարվելիք փոփոխությունների նախագիծը,

4.8.3. կանոնադրական կապիտալը կազմող բաժնետոմսերի քանակը և դրանց գումարային անվանական արժեքը՝ կանոնադրական կապիտալի չափի մեծացման կամ փոքրացման արդյունում,

4.8.4. Նոր տեսակի բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում՝ դրանց տեղաբաշխման կարգը և ժամկետները, բաժնետերերի իրավունքները՝ ըստ այդ և նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի։

4.9. Ընկերությունն իրավունք ունի ավելացնել իր կանոնադրական կապիտալը բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու և/կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով։

4.10. Ընկերությունը չի կարող բաժնետոմսեր թողարկել տնտեսական գործունեության ընթացքում գոյացած պարտքերը մարելու համար։

4.11. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացում թույլատրվում է միայն այն լրիվ վճարելուց հետո։

4.12. Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումն իրականացվում է բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ կամ դրանց ընդհանուր քանակի կրճատմամբ, այդ թվում՝ Օրենքով սահմանված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ։

4.13. Ընկերությունը իրավունք ունի ձեռք բերել իր կողմից տեղաբաշխված բաժնետոմսերը Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ՝ տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով դրանց մի մասի ձեռքբերման ճանապարհով։

Բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք չունի տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով դրանց մի մասի ձեռքբերմամբ Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին որոշում ընդունել, եթե շրջանառության մեջ մնացած բաժնետոմսերի անվանական արժեքը ավելի փոքրանա Օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից։

Սույն կետին համապատասխան ընկերության կողմից ձեռք բերված բաժնետոմսերը մարվում են դրանք ձեռք բերելիս։

Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ սույն կետին համապատասխան ձեռք բերվող բաժնետոմսերի վճարում կարող է իրականացվել դրամով և/կամ այլ գույքով։

4.14. Ընկերության կանոնադրական կապիտալը թույլատրվում է նվազեցնել, եթե Ընկերությունն այդ մասին ընդունել է որոշում և 30 օրվա ընթացքում տեղեկացրել է իր պարտատերերին։ Այդ դեպքում Ընկերության պարտատերերն իրավունք ունեն Ընկերությունից պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև վնասների հատուցում

4.15. Կանոնադրական կապիտալի չափի նվազեցման դեպքում մեկ տարուց ոչ պակաս ժամկետում Ընկերությանը չդիմելու դեպքում (հավաստագիրը փոխանակելու կամ համապատասխան գրառում կատարելու համար) բաժնետոմսերը համարվում են անվավեր։ Ընկերությունը կարող է դրանց փոխարեն թողարկել նոր բաժնետոմսեր կամ դրանց մարման ճանապարհով նվազեցնել կանոնադրական կապիտալը։

4.16. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման կապակցությամբ բաժնետերերին վճարումները կատարվում են Ընկերության կանոնադրության փոփոխությունների պետական գրանցումից հետո։

4.17. Հիմնադիրների (բաժնետերերի) ներդրումների հաշվին ստեղծված, ինչպես նաև Ընկերության ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացված և ձեռք բերված գույքը սեփականության իրավունքով պատկանում է Ընկերությանը։

4.18. Եթե Ընկերության երկրորդ և յուրաքանչյուր հաջորդող ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվի, որ Ընկերության զուտ ակտիվների արժեքն Ընկերության կանոնադրական կապիտալից փոքր է, ապա Ընկերությունը պարտավոր է հայտարարել և սահմանված կարգով գրանցել կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը։

4.19. Ընկերության կանոնադրական կապիտալում կատարված ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում կանոնադրության մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրում դրանք գրանցելու պահից:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ ԵՎ ԶՈՒՏ ԱԿՏԻՎՆԵՐԸ

5.1. Ընկերության պահուստային հիմնադրամը, որը չպետք է նվազ լինի Ընկերության կանոնադրական կապիտալի 15%-ից, ձևավորվում է Ընկերության շահույթից կատարվող հատկացումներից: Ընկերության պահուստային հիմնադրամի ձևավորման կարգը սահմանվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

5.2. Պահուստային հիմնադրամը նախատեսված է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության եկամուտը և այլ միջոցները չեն բավականացնում դրա համար: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակներով:

5.3. Ընկերությունն իրավունք ունի ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան ձևավորել այլ հիմնադրամներ:

5.4. Ընկերության զուտ ակտիվների արժեքը գնահատվում է հաշվապահական հաշվեկշռի կամ աուդիտորական վերստուգման տվյալներով՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ

6.1. Ընկերությունը կարող է տեղաբաշխել բաժնետոմսեր, պարտատոմսեր, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ արժեթղթեր:

6.2. Ընկերությունն իրավունք ունի տեղաբաշխել հասարակ (սովորական) և արտոնյալ բաժնետոմ-սեր: Ընկերության թողարկած արտոնյալ բաժնետոմսերի ընդհանուր անվանական արժեքը չպետք է գերազանցի Ընկերության կանոնադրական կապիտալի 25 տոկոսը:

6.3. Ընկերության կողմից տեղաբաշխված բոլոր հասարակ (սովորական) բաժնետոմսերն ունեն միևնույն անվանական արժեքը:

6.4. Բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել անվանական բաժնետոմսեր և պարտատոմսեր:

6.5. Բաժնետիրոջ կողմից բաժնետոմսերի արժեքի վճարումից և Ընկերության պետական գրանցումից հետո Ընկերությունը Օրենքով սահմանված կարգով բաժնետիրոջ բաժնետոմսերը պետք է գրանցի իր բաժնետոմսերի ռեեստրում:

6.6. Ընկերությունը կարող է ժողովի հաստատած՝ աշխատակիցների բաժնետիրացման ծրագրով սահմանված կարգով իր աշխատակիցների միջև տեղաբաշխել (տրամադրել) Ընկերության բաժնետոմսեր կամ այնպիսի ածանցյալ ֆինանսական գործիքներ (գործարքներ), որոնցով պարտավորությունների վերջնահաշվարկը կարող է իրականացվել Ընկերության բաժնետոմսերով (այսուհետ՝ ածանցյալ ֆինանսական գործիքներ): Ընկերության լրացուցիչ տեղաբաշխված բաժնետոմսերը պետք է վճարվեն դրանց տեղաբաշխման մասին որոշմամբ սահմանված ժամկետում, բայց ոչ ուշ, քան դրանց տեղաբաշխման պահից մեկ տարվա ընթացքում:

6.7. Ընկերության բաժնետոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարումը կարող է իրականացվել դրամով, արժեթղթերով, այլ գույքով կամ գույքային իրավունքներով, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներով: Ընկերության այն բաժնետոմսերը և այլ արժեթղթերը, որոնց դիմաց վճարումը նախատեսված է ոչ դրամական միջոցներով, ձեռք են բերվում դրանց լրիվ արժեքի վճարմամբ: Բնեղենով կատարված ներդրումների գնահատումից և դրան համապատասխանաբար բաժնետոմսերի տեղաբաշխումից հետո նման ներդրումների

արժեքի աճը կամ նվազումը չի կարող անդրադառնալ այդ կերպ տեղաբաշխված բաժնետոմսերի քանակի կամ անվանական արժեքի վրա:

6.8. Ընկերությունն իրավունք ունի թողարկել պարտատոմսեր՝ կանոնադրական կապիտալի չափը չգերազանցող գումարով:

6.9. Ընկերության կողմից բոլոր բաժնետոմսերի և արժեթղթերի տեղաբաշխումը, դրանց դիմաց վճարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ

7.1. Ընկերությունը, համաձայն սույն Կանոնադրության, Օրենսգրքի, Օրենքի և այլ իրավական ակտերի դրույթների, իրավունք ունի ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ) ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ դրա սահմաններից դուրս:

7.2. Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ այլ ոչ առևտրային բնույթի գործունեություն իրականացնելու համար Ընկերությունը կարող է ստեղծել հիմնարկ:

7.3. Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկներն իրավաբանական անձինք չեն, գործում են Ընկերության անունից և Ընկերության հաստատած կանոնադրության հիման վրա:

7.4. Ընկերության մասնաճյուղերին և ներկայացուցչություններին հատկացվում է գույք, որը հաշվառվում է ինչպես նրանց առանձին հաշվեկշիռներում, այնպես էլ Ընկերության հաշվեկշռում:

7.5. Ընկերության ներկայացուցչության կամ մասնաճյուղի ղեկավարը նշանակվում է Ընկերության Գլխավոր տնօրենի կողմից և գործում է Ընկերության կողմից տրված լիազորագրի հիման վրա:

7.6. Ընկերությունը պատասխանատվություն է կրում իր մասնաճյուղի կամ ներկայացուցչության գործունեության համար:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Ընկերությունը կարող է որոշում կայացնել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:

8.2. Տեղաբաշխված յուրաքանչյուր տեսակի (դասի) բաժնետոմսի համար Ընկերությունը հայտարարված շահութաբաժինները կարող է վճարել դրամով կամ այլ գույքով:

8.3. Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից):

8.4. Ըստ բաժնետոմսերի տարբեր տեսակների և դասերի միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման մասին որոշումը, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընկերության տնօրենների խորհուրդը (այսուհետ նաև Խորհուրդ): Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի վճարման չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ Ընկերության Խորհրդի առաջարկությամբ:

8.5. Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող նվազ լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժիններից:

8.6. Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել Խորհրդի առաջարկածից և պակաս լինել՝ արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

8.7. Ընկերությունն իրավունք չունի որոշում կայացնել շահութաբաժինների վճարման վերաբերյալ, եթե

8.7.1. լրիվ չի վճարվել Ընկերության Կանոնադրական կապիտալը,

8.7.2. շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության վիճակը համապատասխանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված անվճարունակության (սնանկության) հատկանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.

8.7.3. Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով,

8.7.4. Ընկերությունը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը Օրենքի 58-րդ հոդվածի դրույթներին համապատասխան.

9. ՀԱՍԱՐԱԿ (ՍՈՎՈՐԱԿԱՆ) ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9.1. Ընկերության բաժնետեր է ճանաչվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված հիմքերով Ընկերության բաժնետոմսերին տիրապետող անձը:

9.2. Ընկերության որոշակի դասի հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերն ունեն միևնույն իրավունքները:

9.3. «Ա» և «Բ» դասի հասարակ բաժնետոմսերի սեփականատերն իրավունք ունի՝

9.3.1. մասնակցել բաժնետերերի ընդհանուր ժողովին՝ վերջինիս իրավասությանը վերապահված բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով՝ իր լրիվ վճարված բաժնետոմսերին համամասնորեն,

9.3.2. մասնակցել Ընկերության կառավարմանը,

9.3.3. սույն կանոնադրությամբ և Օրենքին համապատասխան ստանալ շահութաբաժիններ,

9.3.4. սույն կանոնադրությամբ և Օրենքով սահմանված կարգով ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին, Ընկերության արտադրատնտեսական գործունեությանը.

9.3.5. սույն կանոնադրությանն ու Օրենքին համապատասխան առաջարկություններ ներկայացնել բաժնետերերի ընդհանուր ժողովին,

9.3.6. բաժնետերերի ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի,

9.3.7. դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.

9.3.8. Ընկերության լուծարման դեպքում Օրենքով սահմանված կարգով ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը,

9.3.9. Օրենքին համապատասխան Ընկերության շահույթի, պահուստային և/կամ այլ միջոցների հաշվին կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ տվյալ պահին կանոնադրական կապիտալում իր մասնակցությանը համապատասխան քանակությամբ նոր բաժնետոմսեր,

9.3.10. օրենսդրությամբ սահմանված կարգով օտարել կամ այլ ձևով տնօրինել իր սեփականությունը հանդիսացող բաժնետոմսերը

9.3.11. օգտվել նոր բաժնետոմսեր ձեռք բերելու նախապատվության իրավունքից

9.3.12. ունենալ ՀՀ օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

9.4. Հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերը պարտավոր են չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները, որոնց ցանկը սահմանում է Ընկերության խորհուրդը:

9.5. Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերը կարող են չկատարել կանոնադրությամբ սահմանված լրացուցիչ պարտականությունները, եթե նա դեմ է քվեարկել կամ չի մասնակցել տվյալ հարցով քվեարկությանը:

9.6. Ընկերությունը չի երաշխավորում հասարակ (սովորական) բաժնետոմսերով շահութաբաժնի վճարումը:
9.7. Բաժնետերերը կարող են կրել ՀՀ օրենսդրությանը, սույն կանոնադրությանը ու այլ իրավական ակտերին չհակասող այլ պարտականություններ:

10. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

10.1. Ընկերության կառավարման մարմիններն են՝
- Բաժնետերերի ընդհանուր ժողովը
- Տնօրենների խորհուրդը
- Գլխավոր տնօրենը

10.2. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկման մարմինն է Ընկերության Վերստուգող հանձնաժողովը (Վերստուգողը):

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11.1. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ նաև Ժողով) Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:
11.2. Ընկերությունը յուրաքանչյուր տարի գումարում է բաժնետերերի մեկ ընդհանուր տարեկան ժողով: Ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովը գորմարվում է Ընկերության համապատասխան ֆինանսական տարվա ավարտից հետո վեց(6) ամսվա ընթացքում: Ընկերության տարեկան ժողովների միջև ընկած ժամանակահատվածը չպետք է տասնութ (18) ամսից ավել լինի:
11.3. Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներից բացի Ընկերության մյուս բոլոր ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները կարող են գումարվել ցանկացած ժամանակ սույն կանոնադրությամբ նախատեսված կարգով: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:
11.4. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում՝
    11.4.1. Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը:
    11.4.2. Ընկերության վերակազմակերպումը:
    11.4.3. Ընկերության լուծարումը:
    11.4.4. Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը, ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը:
    11.4.5. Ընկերության Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Ընկերության տնօրենների խորհրդի քանակական կազմի հաստատումը և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես Ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովներում: Նշված հարցերը կարող են քննարկվել նաև Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովներում, եթե վերջինս որոշում է կայացրել Ընկերության Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:
    11.4.6. Ընկերության տնօրենների խորհրդի անդամի և նախագահի աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը:
    11.4.7. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի, ինչպես նաև Ընկերության տնօրենների խորհրդի նիստերի վարման (գումարման, անցկացման) կարգը սահմանող ներքին փաստաթղթերի հաստատումը,
    11.4.8. հայտարարված բաժնետոմսերի քանակի, անվանական արժեքի, դասի(տեսակի) և այդ բաժնետոմսերով տրամադրվող իրավունքների սահմանումը:

11.4.9. բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի ընդհանուր քանակի կրճատման նպատակով տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռք բերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը:

11.4.10. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի՝ Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,

11.4.11. բաժնետոմսերի համախմբում (կոնսոլիդացիա) և բաժանում,

11.4.12. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես Ընկերության բաժնետերերի տարեկան ժողովներում՝ Ընկերության խորհրդի ներկայացմամբ: Ընկերության ստորաբաժանումների, դուստր և կախյալ ընկերությունների աշխատանքի տարեկան արդյունքների հաստատումը կարող է քննարկվել նաև բաժնետերերի արտահերթ ժողովներում:

11.4.13. խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ Օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում,

11.4.14. շահագրգռվածության առկայության դեպքում գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ Օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում,

11.4.15. Առևտրային կազմակերպությունների այլ միությունների, դուստր և կախյալ ընկերությունների հիմնադրումը և մասնակցությունը,

11.4.16. սույն կանոնադրությամբ և Օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը:

11.5. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե Օրենքով ձայների այլ քանակ սահմանված չէ:

11.6. Բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք չունի փոփոխել օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

12. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

12.1. Տարեկան և արտահերթ ժողովները գումարվում են Ընկերության Խորհրդի կողմից, բացառությամբ Օրենքով սահմանված դեպքերի:

12.2. Ընկերությունը պարտավոր է իր բաժնետերերին տարեկան ընդհանուր ժողովի գումարման մասին սույն կանոնադրությամբ և Օրենքով սահմանված կարգով ծանուցել ժողովի գումարման օրվանից առնվազն 21(քսանմեկ) օր առաջ:

12.3. Ժողովի գումարման մասին ծանուցումը կարող է կատարվել բաժնետերերի կողմից Ընկերությանը տրամադրած էլեկտրոնային փոստի միջոցով:

12.4. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները գումարվում են Ընկերության գործադիր մարմնի գտնվելու վայրում: Ընկերության Խորհրդի որոշմամբ կարող է ընտրվել ժողովի գումարման այլ վայր:

12.5. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշումները կարող են ընդունվել

12.5.1. ժողով գումարելով՝ բաժնետերերի կամ նրանց լիազոր ներկայացուցիչների ֆիզիկական ներկայությամբ կամ հեռախոսային կոնֆերանսի կամ կապի այլ միջոցներով,

12.5.2. առանց ժողով գումարելու՝ հեռակա քվեարկության (հարցման) միջոցով քվեարկությամբ, որը կատարվում է Ընկերության Խորհրդի կողմից հաստատված, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխանող քվեաթերթիկների օգտագործմամբ: Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ: Քվեաթերթիկներն ուղարկվում են բաժնետերերին պատվիրված նամակով կամ էլեկտրոնային փոստով կամ հանձնվում են անձամբ, եթե

Ընկերության խորհրդի որոշմամբ դրանք ուղարկելու այլ եղանակ չի սահմանվում: Հեռակա կարգով քվեարկության ժամանակ, բաժնետերերին քվեաթերթիկների և ժողովի օրակարգի հետ մեկտեղ առաքվում են ՀՀ օրենսդրությամբ նախատեսված նյութերը և տեղեկությունները:

12.6. Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել է Ընկերության քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

12.7. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում բաժնետերերին ներկայացվում են օրենքով, սույն կանոնադրությամբ և Ընկերության խորհրդի որոշմամբ սահմանված տեղեկությունները (նյութերը):

12.8. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման ընթացքում ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև այլ տեղեկությունների (նյութերի) ներկայացման ձևը կարող է սահմանվել ժողովի գումարման մասին Ընկերության խորհրդի որոշմամբ:

12.9. Ընկերության բաժնետերերն Ընկերության ընդհանուր ժողովում մասնակցելու իրենց իրավունքը կարող են իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով: Բաժնետիրոջ ներկայացուցիչը կարող է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցել միայն օրենքով սահմանված կարգով տրված լիազորագրի առկայության դեպքում:

12.10. Բաժնետերերի ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է ժողովի ավարտից հետո 5(հինգ) օրվա ընթացքում՝ առնվազն 2 օրինակով, որոնք ստորագրվում են ժողովի նախագահի և ժողովի քարտուղարի կողմից:

12.11. Արձանագրության մեջ նշվում են՝

12.11.1. Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը,

12.11.2. Անցկացման վայրը

12.11.3. Ընկերության՝ տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը,

12.11.4. Ժողովին մասնակցած բաժնետերերի ձայների գումարային քանակը,

12.11.5. Ժողովի նախագահը, քարտուղարը, օրակարգը

12.11.6. կայացած ելույթների հիմնական դրույթները,

12.11.7. քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները,

12.11.8. Ժողովի կողմից ընդունված որոշումները:

12.12. Ընկերության բաժնետերերն իրավունք ունեն ծանոթանալ Ժողովի արձանագրություններին:

12.13. Ժողովի ընդունած որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները պետք է ներկայացվեն Ընկերության բաժնետերերին այդ որոշումներն ընդունելու պահից՝ 45 օրվա ընթացքում բաժնետիրոջ կողմից տրամադրված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:

13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ, ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13.1. Ընկերության տնօրենների խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք Օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը:

13.2. Ընկերության Խորհուրդը պետք է գործի և որոշումներ կայացնի Ընկերության բաժնետերերի ժողովի կողմից ընդունված կանոնակարգին համապատասխան, որով սահմանվում է նաև Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը (ներառյալ՝ հեռակա քվեարկությամբ որոշումների ընդունման կարգն ու դրա կիրառման սահմանափակումները), ինչպես նաև Խորհրդի իրավասությանը վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ գործողությունները:

13.3. Ընկերության Խորհրդի լիազորությունները սահմանված են «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև սույն կանոնադրությամբ:

13.4. Ընկերության Խորհրդի իրավասությանն են պատկանում՝

13.4.1. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ՝ Ընկերության ռազմավարության, հեռանկարային ծրագրերի, միջանկյալ և երկարաժամկետ բիզնես ծրագրերի, տարեկան բիզնես ծրագրի հաստատումը և դրանց կատարման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև Ընկերության տարեկան բյուջեի հաստատումը.

13.4.2. Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, եթե դա պայմանավորված է Հայաստանի Հանրապետության տարածքում Ընկերության գտնվելու վայրի փոփոխությամբ կամ Ընկերության հայտարարված բաժնետոմսերի տեղաբաշխմամբ, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի վերաբերյալ դրույթներ սահմանելով.

13.4.3. Ընկերության գործադիր մարմնի գործունեության վերահսկողությունը, գնահատումը (ներառյալ՝ խրախուսման և պատասխանատվության միջոցների կիրառումը), այդ թվում Խորհրդի որոշումների իրականացման կատարողականի խախտման դեպքերում իրականացվող միջոցառումների սահմանումը.

13.4.4. բաժնետերերի տարեկան և արտահերթ ընդհանուր ժողովների գումարումը, բացառությամբ Օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված դեպքերի.

13.4.5. բաժնետերերի ընդհանուր ժողովների օրակարգի հաստատումը.

13.4.6. բաժնետերերի ընդհանուր ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու, ինչպես նաև այն բոլոր հարցերի լուծումը, որոնք կապված են բաժնետերերի ընդհանուր ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են տնօրենների խորհրդի իրավասությանը՝ Օրենքին համապատասխան.

13.4.7. Օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 14-րդ, 18-20-րդ, 22-րդ և 23-րդ կետերով նախատեսված հարցերի ներկայացումը բաժնետերերի ընդհանուր ժողովի քննարկմանը և լուծմանը.

13.4.8. բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը

13.4.9. պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը

13.4.10. գույքի շուկայական արժեքի որոշումը՝ Օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով.

13.4.11. Օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և արժեթղթերի ձեռք բերումը և հետգնումը.

13.4.12. Այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունը խոշոր գործարք չէ.

13.4.13. Ընկերության գործադիր մարմնի ձևավորումը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի նշանակումը.

13.4.14. Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

13.4.15. Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ բաժնետերերի ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը.

13.4.16. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

13.4.17. Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

13.4.18. Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (բացառությամբ Խորհրդի նախագահի և անդամի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.

13.4.19. Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ բաժնետերերի ընդհանուր ժողովին առաջարկությունների նախապատրաստումը և դրանց ներկայացումը բաժնետերերի ընդհանուր ժողովին,

13.4.20. Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

13.4.21. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը (բացառությամբ այն փաստաթղթերի, որոնց հաստատումը սույն կանոնադրությամբ վերապահված է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը).

13.4.22. Ընկերության քաղաքականությունների հաստատումը (ներառյալ՝ հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և շահութաբաժինների քաղաքականությունը).

13.4.23. Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը .

13.4.24. Ընկերության գույքի օտարման և ձեռք բերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ Օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում.

13.4.25. Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

13.4.26. Օրենքի IX գլխով նախատեսված շահագրգռվածությամբ գործարքների կնքումը.

13.4.27. Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.

13.4.28. Ընկերության ամենամյա ծախսերի նախահաշվի (բյուջեի) և դրա կատարողականի հաստատումը, ինչպես նաև վերանայված (ճշգրտված) բյուջեի հաստատումը,

13.4.29. Ընկերության հաստիքացուցակի հաստատումը՝ Ընկերության գործադիր մարմնի ներկայացմամբ

13.4.30. Օրենքով և սույն կանոնադրությամբ և /կամ բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից ընդունված Ընկերության Խորհրդի կանոնակարգով իր իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը.

14. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ

14.1. Խորհուրդը ղեկավարում է Խորհրդի նախագահը, որը ընտրվում է Խորհրդի անդամների կազմից՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների պարզ մեծամասնությամբ:

14.2. Ընկերության Խորհուրդը իրավունք ունի ցանկացած ժամանակ ձայների պարզ մեծամասնությամբ վերընտրել իր նախագահին կամ ընտրել նոր նախագահ:

14.3. Ընկերության Խորհրդի նախագահը՝

14.3.1. կազմակերպում է Խորհրդի աշխատանքները,

14.3.2. գումարում է Խորհրդի նիստերը և նախագահում է դրանք

14.3.3. կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը,

14.3.4. նախագահում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովներում,

14.3.5. իրականացնում է Օրենքով, սույն կանոնադրությամբ և Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված կանոնակարգերով նախատեսված այլ գործառույթներ:

14.4. Ընկերության Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա գործառույթները Խորհրդի որոշմամբ իրականացնում է Խորհրդի անդամներից մեկը:

15. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

15.1. Ընկերության Խորհրդի քանակական կազմը սահմանվում է Ընդհանուր ժողովի կողմից և չի կարող պակաս լինել 3(երեք) հոգուց:

15.2. Տնօրենների խորհրդի անդամների առնվազն մեկ երրորդը պետք է լինի անկախ:

15.3. Ընկերության խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում արտահերթ ժողովի կողմից: Խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:

15.4. Ժողովը կարող է որոշում ընդունել խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

15.5. Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:

15.6. Ընկերության տնօրենների խորհրդի անդամ կարող է ընտրվել Օրենքով, ինչպես նաև Խորհրդի կանոնակարգով սահմանված պահանջներին և սահմանափակումներին համապատասխանող ցանկացած գործունակ ֆիզիկական անձ:

15.7. Ընկերության այն բաժնետերերը, որոնք ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 (տասը) և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Ընկերության Խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին:

15.8. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերության Խորհրդի անդամներին իրենց պարտականությունները կատարելու ընթացքում կարող են վճարվել պարգևավճարներ և (կամ) փոխհատուցվել Ընկերության Խորհրդի անդամների գործառույթները կատարելու հետ կապված ծախսերը:

15.9. Խորհրդի անդամները Ընկերության առջև պատասխանատվություն են կրում իրենց գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությանը պատճառած վնասի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

15.10. Ընկերությանը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում են Ընկերության խորհրդի այն անդամները, որոնք Ընկերությանը վնասներ պատճառած որոշման Ընկերությանը վնասներ պատճառած որոշման ընդունմանը դեմ են քվեարկել կամ նիստին ներկա չեն գտնվել:

15.11. Ընկերության խորհրդի անդամն ազատվում է օրենսդրությամբ սահմանված՝ Ընկերությանը պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ իր գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությունը կկրի վնասներ:

15.12. Ընկերության Խորհրդի անդամության թեկնածուների առաջադրման, ընտրության, խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման և թափուր տեղերի լրացման հետ կապված ընթացակարգային հարցերը սահմանվում են Խորհրդի կանոնակարգով:

16. ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ և ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳ

16.1. Ընկերության Խորհուրդն իր իրավասությանը վերապահված հարցերով որոշումներն ընդունում է նիստերի միջոցով՝ առկա կամ հեռակա քվեարկությամբ, նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե ձայների այլ քանակ նախատեսված չէ սույն կանոնադրությամբ կամ Խորհրդի կանոնակարգով:

16.2. Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ, խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության գործադիր մարմնի, Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի կամ Ընկերության որևէ բաժնետիրոջ պահանջով:

16.3. Ընկերության Խորհրդի նիստը իրավասու է, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների կեսից ոչ պակասը:

16.4. Քվեարկության ժամանակ Ընկերության Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայների փոխանցումը խորհրդի մեկ անդամից մյուսին արգելվում է: Ձայների հավասարության դեպքում Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

16.5. Խորհրդի նիստերն արձանագրվում են: Յուրաքանչյուր նիստի արձանագրություն կազմվում է նիստի ավարտից հետո 5 օրվա ընթացքում և ստորագրվում է նիստին մասնակցող բոլոր անդամների կողմից, որոնք պատասխանատվություն են կրում արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

17. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ՝ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԸ

17.1. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության միանձնյա գործադիր մարմինը՝ գլխավոր տնօրենը: Գլխավոր տնօրենի և Խորհրդի նախագահի պաշտոնները չեն կարող համատեղվել:

17.2. Ընկերության գլխավոր տնօրենը ընտրվում և նրա լիազորությունները վաղաժամկետ դադարում են Ընկերության Խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ:

17.3. Ընկերության գլխավոր տնօրենի իրավասությանն են պատկանում ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ Օրենքով և սույն կանոնադրությամբ բաժնետերերի ընդհանուր ժողովի և Խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի:

17.4. Ընկերության գլխավոր տնօրենը՝

17.4.1. կազմակերպում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի և խորհրդի որոշումների կատարումը:

17.4.2. տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.

17.4.3. ներկայացնում է Ընկերությունը ՀՀ-ում և արտասահմանում.

17.4.4. գործում է առանց լիազորագրի.

17.4.5. տալիս է լիազորագրեր: ՀՀ դատարաններում և ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, ՀՀ այլ պետական մարմիննե-րում բոլոր դատական գործերի առնչությամբ Ընկերության շահերը ներկայացնելու և Ընկերության անունից հանդես գալու, ինչպես նաև վերոնշյալի համար անհրաժեշտ այլ գործո-ղություններ իրականացնելու հետ կապված լիազորագրեր տրամադրելու իրավասություն ունեն նաև Ընկերության իրավաբանական տնօրենը և/կամ հաճախորդների սպասարկման բաժնի տնօրենը.

17.4.6. սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.

17.4.7. աշխատակիցների նկատմամբ իրականացնում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված գործատուի իրավունքներն ու պարտականությունները.

17.4.8. Բանկերում, այլ վարկային կազմակերպություններում (ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում՝ արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակից կազմակերպություններում) Ընկերության հաշվարկային և այլ հաշիվներ է բացում

17.4.9. Ընկերության Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.

17.4.10. արձակում է հրամաններ, հաստատում է Ընկերության ներքին ակտերը՝ բացառությամբ Խորհրդի և Բաժնետերերի ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող ներքին փաստաթղթերի, տալիս է Ընկերության բոլոր աշխատակիցների կողմից կատարման համար պարտադիր ցուցումներ

17.4.11. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին.

17.4.12. աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.

17.4.13. իրականացնում է Օրենքով և սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

18. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ (ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ)

18.1. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը 3 (երեք) տարի ժամկետով ընտրում է Ընկերության վերստուգող հանձնաժողով (վերստուգող) և սահմանում վերջինիս վարձատրության և (կամ) ծախսերի փոխհատուցման չափերը և պայմանները:

18.2. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) հաշվետու է ժողովին, :

18.3. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին ու կանոնադրությանը:

18.4. Ընկերության Վերստուգող հանձնաժողովը բաղկացած է 3(երեք)անդամից, որի նախագահն ընտրվում է հանձնաժողովի կազմից՝ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

18.5. Վերստուգող հանձնաժողովի անդամ (վերստուգող) կարող է լինել Ընկերության կառավարման մարմիններում չընդգրկված ցանկացած ֆիզիկական անձ:

18.6. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը)՝

18.6.1. իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, ժողովի կամ խորհրդի որոշմամբ, ինչպես նաև Ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով.

18.6.2. Օրենքով սահմանված դեպքում իրավունք ունի պահանջել արտահերթ ժողովի գումարում.

18.6.3. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություններ,

18.6.4. Վերստուգող հանձնաժողովը (վերստուգողը) Ընկերության գործունեության տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) եզրակացությունը պարտադիր է:

18.7. Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) իրավասությունները սահմանված են Օրենքով, Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից հաստատված վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) ներքին փաստաթղթերով՝ վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կանոնակարգով:

19. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

19.1. Ընկերությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ * ԻՐԱՎԱՍԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ՎԱՏՈՎԵԶՈՒ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Կազմված է «31» հոկտեմբեր 2023թ.
Բաղկացած է 1 (մեկ) էջից

Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ 3

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
(այսուհետ՝ նաև Ընկերություն)
Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի
2023 թ. հոկտեմբեր 31-ի թիվ 231031 որոշմամբ

Գլխավոր Տնօրեն՝
_____ ՀԱՅԿ ԵՍԱՅԱՆ
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

«31» հոկտեմբեր 2023թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿՈՂՄԻՑ՝ 11.04.2023
գրանցման համար՝ 264.130.1310465
ՀՎՀՀ՝ 02500052
11.04.2023 թ. գրանցված կանոնադրության թիվ 001/3 փոփոխությունը գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից
30 11 2023 թ.
աշխատակից՝

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(փոփոխություն)

1. Ուժը կորցրած ճանաչել Ընկերության կանոնադրության 1.2 կետը:

ԵՐԵՎԱՆ
2023 թ.

Կազմված է «01» նոյեմբեր 2023թ.
Բաղկացած է 2 էջից

Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ 3

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
(այսուհետ՝ նաև Ընկերություն)
Բաժնետերերի սրտահերթ ընդհանուր ժողովի
2023 թ. նոյեմբերի 01-ի թիվ 231101 որոշմամբ

Գլխավոր Տնօրեն՝
_____ ՀԱՅԿ ԵՍԱՅԱՆ
(ստորագրություն) (անուն, ազգանուն)
«01» նոյեմբեր 2023թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿՈՂՄԻՑ - 11.04.2023թ.
գրանցման համար՝ 264.130.1310465
ՀՎՀՀ՝ 02500052
11.04.2023 թ. գրանցված կանոնադրության թիվ 0013 փոփոխությունը գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից
06 11 2023 թ.
աշխատակից
_____ _____

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(փոփոխություն)

ԵՐԵՎԱՆ
2023 թ.

1. Ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

   «4.2. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 22,837,709,000 (քսաներկու միլիարդ ութ հարյուր երեսունյոթ միլիոն յոթ հարյուր ինը հազար) ՀՀ դրամ, որը բաժանված է 188,377,090 (հարյուր ութսունութ միլիոն երեք հարյուր յոթանասունյոթ հազար իննսուն) հատ «Բ» դասի և 40,000,000 (քառասուն միլիոն) հատ «Ա» դասի հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերի: «Ա» և «Բ» դասի բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ:

2. Ընկերության կանոնադրության 4.3 կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

   «4.3. Ընկերությունն ունի նաև 460,000,000 (չորս հարյուր վաթսուն միլիոն) հատ «Ա» դասի հասարակ (սովորական) հայտարարված բաժնետոմս: Հայտարարված մեկ բաժնետոմսի անվանական արժեքը 100 (հարյուր) ՀՀ դրամ է:

3. Ընկերության կանոնադրության 4.4 կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.
   «4.4. Ընկերության 188,377,090 (հարյուր ութսունութ միլիոն երեք հարյուր յոթանասունյոթ հազար իննսուն) հատ «Բ» դասի հասարակ (սովորական) անվանական բաժնետոմսերը և «Ա» դասի 40,000,000 (քառասուն միլիոն) հատ հասարակ անվանական բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված են և պատկանում են բաժնետերերին:»

4. Ընկերության կանոնադրության մեջ ավելացնել 11.4.17 կետը հետևյալ խմբագրությամբ.

   «11.4.17. Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) կանոնակարգի հաստատումը:»

5. Ընկերության կանոնադրության 12.2 կետից հանել «տարեկան» բառը:

6. Ընկերության կանոնադրության 12.3 կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

   «12.3. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձինք Ընկերության գործադիր մարմնին են տրամադրում իրենց էլեկտրոնային փոստի հասցեները: Ժողովի գումարման մասին ծանուցումը կարող է կատարվել Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձանց կողմից Ընկերությանը (գործադիր մարմնին) տրամադրած էլեկտրոնային փոստի միջոցով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների «www.azdarar.am» պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակելու միջոցով. նման պարագայում Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձինք համարվում են պատշաճ ծանուցված:»

7. Ուժը կորցրած ճանաչել Ընկերության կանոնադրության 13.4.14 կետը:

14

Կազմված է «26» հունիս 2024թ.
Բաղկացած է 2 (երկու) էջից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
(այսուհետ՝ նաև Ընկերություն)
Բաժնետերերի հերթական/տարեկան
ընդհանուր ժողովի կողմից
(կայացած՝ 2024 թ. հունիսի 26-ին,
արձանագրություն՝ թիվ 240626)

Գլխավոր Տնօրեն՝
_____ ՀԱՅԿ ԵՍԱՅԱՆ
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

«26» հունիս 2024թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿՈՂՄԻՑ՝ 11.04.2023
գրանցման համար՝ 264.130.1310465
ՀՎՀՀ՝ 02500052
11.04.2023 թ. գրանցված կանոնադրության
թիվ 03.3 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
09.07. 2024 թ.

պետական ռեգիստրի աշխատակից՝
_____

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(փոփոխություններ և լրացումներ)

ԵՐԵՎԱՆ
2024 թ.

1. Ուժը կորցրած ճանաչել Ընկերության կանոնադրության 13.4.27, 13.4.28 և 13.4.29 ենթակետերը:
2. Ընկերության կանոնադրության 17.4.5 ենթակետում ավելացնել հետևյալ նախադասությունը.

   «Գլխավոր տնօրենի հրամանով նրա պարտականությունները ժամանակավորապես իրականացնող անձը իրավունք ունի տրամադրել լիազորագրեր:»
3. Ընկերության կանոնադրության մեջ ավելացնել 17.4.14, 17.4.15 և 17.4.16 ենթակետերը՝ հետևյալ բովանդակությամբ.

   «17.4.14. Հաստատում է Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը,

   17.4.15. Հաստատում է Ընկերության ամենամյա ծախսերի նախահաշիվը (բյուջեն) և դրա կատարողականը, ինչպես նաև վերանայված (ճշգրտված) նախահաշիվը,

   17.4.15. Հաստատում է Ընկերության հաստիքացուցակը:»

Հավելված № 1
12/09/24 թ. կայացած «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի
№ 240912 արձանագրության:

Կազմված է «12» սեպտեմբեր 2024թ.
Բաղկացած է 2 (երկու) էջից

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ
(այսուհետ՝ նաև Ընկերություն)
Բաժնետերերի արտահերթ ընդհանուր
ժողովի կողմից
(կայացած՝ 2024 թ. սեպտեմբերի 12-ին)

Գլխավոր Տնօրեն՝

_____ ՀԱՅԿ ԵՍԱՅԱՆ
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

«12» սեպտեմբեր 2024թ.

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿՈՂՄԻՑ՝ 11.04.2023
գրանցման համար՝ 264.130.1310465
ՀՎՀՀ՝ 02500052
11.04.2023 թ. գրանցված կանոնադրության
թիվ 0043 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
20 09 2024 թ.

աշխատակից՝

_____ _____

«ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ»

ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(փոփոխություններ)

ԵՐԵՎԱՆ
2024 թ.

1. Ընկերության կանոնադրության 3.17.3 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
   «3.17.3. հնարավորություն ընձեռել իր բաժնետերերին ծանոթանալ վերոնշյալ փաստաթղթերին (բացառությամբ օրենքով և (կամ) Ընկերության տնօրենների խորհրդի որոշմամբ սահմանված գաղտնիք պարունակող փաստաթղթերի),».
2. Ուժը կորցրած ճանաչել Ընկերության կանոնադրության 4.8, 4.10, 4.15 և 6.4 կետերը.
3. Ընկերության կանոնադրության 6.8 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
   «6.8. Ընկերությունը կարող է թողարկել ապահովված և չապահովված պարտատոմսեր՝ անկախ կանոնադրական կապիտալի չափից:».
4. Ընկերության կանոնադրության 11.4.10 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
   «Օրենքի 47-րդ հոդվածով սահմանված նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու որոշման ընդունումը, ինչպես նաև այդ որոշման գործողության ժամկետի սահմանումը, եթե քվեարկող բաժնետոմսերը տեղաբաշխվում են բաց բաժանորդագրության միջոցով, և տեղաբաշխվող բաժնետոմսերի դիմաց վճարումն իրականացվելու է դրամական միջոցներով:»
5. Ընկերության կանոնադրության 17.4.9 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
   «17.4.9. Ընկերության Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը.»:

14